եղել: Լևոն Թորոսյանն իրենից հետաքրքրվել է, թե որտեղ է մեքենա վարել: Նրան պատմել է, որ եղել է «Բիթլիս» կոչվող մարտական հենակետում, որտեղ ծառայության ընթացքում մի քանի անգամ խրամուղի մտած շնից վախեցել է, քանի որ խրամուղի մուտք գործելիս դատարկ տարաները ձայներ են հանել՝ զգուշացնելով մուտքի մասին: Պատմել է նաև, որ «Հակոբասարում» ևս վարորդ է եղել, սակայն նա դրա վերաբերյալ ոչինչ չի ասել: Հաջողություն մազթելիս գրկախառնվել են, որի ընթացքում Լևոն Թորոսյանը ժպտալով ասել է. «Հելնում եմ վերև, կարողա չիջնեմ», ինչին արձագանքել է ժպիտով և ասել է, որ ամեն ինչ լավ կլինի, դուխով գնա: Նշված արտահայտությունը որևէ մեկից նախկինում չի լսել, իսկ քանի որ Լևոն Թորոսյանը ժպտալով է ասել, իրեն թվացել է, որ հնարավոր է դիրքերում ծառայությունից վախենալու պատճառով է ասում: Խոսակցությունը տևել է մոտ 7-10 րոպե:

**Վկա Գևորգ Հակոբյանը** ցուցմունք է տվել, որ ժամը 05-ից մինչև ժամը 07-ը գետնատնակի դիմաց կատարել է ծառայություն: Ժամը $06^{40}$-ի կողմերը մտել է կացարան, արթնացրել Լևոն Թորոսյանին և Վազգեն Իսախանյանին, որպեսզի հանդերձավորվեն և կատարվի հերթափոխը: Վախթանգ Վարդանյանի զգուշացրել է, որ ուշադիր լինի և գնացել է 150 մոտ մետր հեռու գտնվող 20 մարտական դիրքից ջուր բերելու: Ժամը $07^{05}$-ի սահմաններում հետ է եկել ու տեսել, որ Լևոն Թորոսյանը ջրի տարայի մոտ իր բջջային հեռախոսով խոսում է, բայց չի իմացել, թե ում հետ է խոսում: Իր հեռախոսի մեջ եղել է 077-87-65-42 խոսելաքարտը: $07^{10}$-ի սահմաններում Լևոն Թորոսյանը հեռախոսը վերադարձրել է ու դրել զինաբուրգի վրա, որից հետո հանդերձավորված մենակ բարձրացել է առաջնագիծ, որ փոխարինի Ալբերտ Բախշյանին և Մինաս Միլիտոնյանին: Չի հարցրել, թե ինչու է մենակ բարձրանում, նա էլ իրեն ոչինչ չի պատմել և տարօրինակ ոչինչ չի եղել, քանի որ լինում է, որ ծառայությունը փոխարինող զինվորները մի քանի րոպե տարբերությամբ են բարձրանում կախված անձնական կարիք հոգալու կամ այլ տեխնիկական հարցերի հետ կապված:

Ժամը $07^{13}$-ի սահմաններում առաջնագծից իջել են Ալբերտ Բախշյանը և Մինաս Միլիտոնյանը՝ իրեն ու Վախթանգ Վարդանյանին փոխարինելու, որպեսզի իրենք հանգստանան: Մինաս Միլիտոնյանը, Վախթանգ Վարդանյանը մտել են կացարան՝ հանգստանալու: Այդ ժամանակ Ալբերտ Բախշյանն իրեն խնդրել է, որ շարունակի մի քանի րոպե ևս կանգնել հերթափոխում, մինչև մտնի զուգարան ու վերադառնա: Մի քանի րոպե անց Վազգեն Իսախանյանը դուրս է եկել ու գնացել դեպի զուգարանի կողմ: 1-2 րոպե անց առաջնագծի կողմից լսել է 1 կրակոցի ձայն: Հայտնել է, որ իր կանգնած տեղից առաջնագծի խրամախորշերը և դրանց հարակից հատվածները չեն երևացել: Լևոն Թորոսյանն իր կանչերին չի արձագանքել: Վայրկյանների տարբերությամբ զուգարանի կողմից Ալբերտ Բախշյանը Լևոն Թորոսյանին կանչելով մոտեցել է կացարանին, հանդերձավորվել է ու գնացել դեպի առաջանագիծ, իսկ նրա հետևից՝ նաև Վազգեն Իսախանյանը: Մտել է կացարան և տագնապ հայտարարել, իսկ Մինաս Ավետիսյանը կանգնել է իր փոխարեն, որից հետո գնացել է դեպի առաջնագիծ, սակայն Ալբերտ Բախշյանը ճանապարհի կեսից իրեն հետ է տվել, որպեսզի գնա և արթնացնի դիրքի պատասխանատու Գառնիկ Ավետիսյանին: Կացարան չհասած՝ առաջնագծի կողմից լսել է մենահատ 3-4 կրակոցների ձայներ, իսկ ճանապարհին տեսել է հանդերձավորված դիրքի ավագ Վալոդյա Հոխիկյանին, ով ևս վազքով բարձրացել է առաջնագիծ: 1-2 րոպե հետո Ալբերտ Բախշյանն իջել է ներքև, ումից տեղեկացել է, որ Լևոն Թորոսյանին տեսել են մահացած, քանի որ նա ինքն իրեն կզակի տակից կրակել է, որը կատարվել է մինչև նրանց տեղ հասնելը և Լևոն Թորոսյանին տեսնելը:

**Վկա Մինաս Միլիտոնյանը** ցուցմունք է տվել, որ Լևոն Թորոսյանի հետ Հոկտեմբերյանի զորմասում անցել են ուսումնական դասընթացներ, սակայն Լևոն Թորոսյանը չի կարողացել հանձնել քննությունը և կոչում չի տրվել: Վերադառնալու օրն իրենց ծառայության են նշանակել մարտական հերթապահությունում: «Հակոբասար» մարտական դիրքում Լևոն Թորոսյանի հետ ծառայության ընթացքում վերջինիս դեմքի արտահայտությունից զգացել է նեղվածություն, նրանից հետաքրքրվել է և իմացել, որ դա կապված է հոգնածության հետ: Իր կարծիքով դա կարող էր կապված լինել նաև զինվորական ծառայության հետ: Մայիսի 6-ին՝ ժամը $07^{25}$-ի սահմաններում եղել է կացարանում, երբ կացարանի դիմաց ծառայության գտնվող Գևորգ Հակոբյանից տեղեկացել է, որ առաջնագծում կրակոց է կատարվել, իսկ Լևոն Թորոսյանը չի արձագանքել կանչերին: Սկզբում մտածել են, որ դիվերսիա է, քանի որ Ալբերտ Բախշյանը մի քանի անգամ կրակել է անտառի կողմ, սակայն քիչ անց պարզվել է, որ Լևոն Թորոսյանն է ինքն իրեն կրակել ու մահացած հայտնաբերվել է թիվ 1 խրամախորշի մոտ:

Հայտնել է, որ Լևոն Թորոսյանն իր վրա թողել է համեստ տպավորություն, կովարար չի եղել, նվիրված է եղել ծառայակից ընկերներին: Ուշադիր է եղել կողքինների հանդեպ: Եղել է, որ ինքը տրամադրություն չի ունեցել, Լևոն Թորոսյանն իրենից հետաքրքրվել է, թե ինչ է պատահել: Նրա խոսելու տոնայնությունը եղել է ցածր, չի լսել նրան գոռալով խոսելիս, հեռախոսով սիրել է խոսել առավոտյան ժամերին:

**Վկա Վազգեն Իսախանյանը** ցուցմունք է տվել, որ Լևոն Թորոսյանը բնավորությամբ եղել է հանգիստ, իր ընկալմամբ նա սեր չի ունեցել ծառայության հանդեպ: Աշխատանքները և ծառայությունը կատարելիս եղել են համերաշխ, որևէ կոնֆլիկտ իր ու Լևոն Թորոսյանի միջև չի եղել: Դիրքում հասցրել է շփվել նրա հետ, որի ընթացքում Լևոն Թորոսյանը պատմել է, որ ուսումնական զորամաս գնալու և կոչում ստանալու հարցը նրա համար այդքան էլ կարևոր չի եղել, կարևորն այն է եղել, որ նա կարողացել է ընտանիքին հաճախակի տեսնել: Նա շատ գոհ է եղել Հոկտեմբերյանի զորմասում ծառայելուց: Պատմել է նաև, որ Հոկտեմբերյանից թիվ 21127 զորամաս վերադառնալու գիշերն ինքնակամ թողել է զորամասի տարածքը, գնացել է Բամբակաշատ գյուղ, շրջել փողոցներով, բայց տուն չի գնացել: Չի պատմել, թե ինչու է գնացել գյուղամեջ կամ ինչու տուն չի գնացել: Միևնույն ժամանակ չգիտի, թե արդյոք Լևոն Թորոսյանը նշվածն իրեն ճիշտ է պատմել, թե՝ ոչ: Նրա հետ հերթապահության եղած ժամանակ խոսել են ընդհանուր ծառայության և առօրյա կյանքի հարցերով, որի ընթացքում Լևոն Թորոսյանը հայտնել է, որ դեռ չի կողմնորոշվել, թե ինչով է զբաղվելու ծառայությունը վերջացնելուց հետո: Նրա կողմից կասկածելի խոսակցություններ չի եղել:

**Վկա Ալեքսան Գրիգորյանը** ցուցմունք է տվել, որ 2018թ. ապրիլի 27-ից իրենց դասակի մյուս զինվորների հետ ծառայության է նշանակվել «Հակոբասար» մարտական հենակետում, իսկ արդեն ապրիլի 29-ից ծառայության վայրը ղեկավար հրամանատարության կողմից փոխվել է, քանի որ թիվ «18» մարտական դիրքում անձնակազմի պակաս է եղել: «Հակոբասար» և թիվ «18» մարտական դիրքերում պատասխանատու է նշանակվել սպա Գառնիկ Ավետիսյանը: Ըստ կատարված փոփոխության «Հակոբասար» մարտական դիրքում ծառայության է նշանակվել Հոկտեմբերյանի ուսումնական զորամասից վերադարձած զինծառայողներ Մինաս Միլիտոնյանը և Լևոն Թորոսյանը: Փոփոխության ընթացքում մի քանի բառ հասցրել է զրուցել նրանց հետ և իմացել է, որ Մինասը ստացել է կրտսեր սերժանտի կոչումը, իսկ Լևոնը ձգում վարժությունից անբավարար է ստացել ու կոչում չի տրվել: Այդ պահին Լևոնի տրամադրությունը նորմալ է եղել, նրա պահվածքում կասկածելի ոչինչ չի նկատել:

Հայտնել է, որ Լևոն Թորոսյանը 2017թ. դեկտեմբերի 7-ին՝ ժամը 08-ի սահմաններում, հարազատներին տեսակցելու պատճառով ինքնակամ թողել է զորամասի տարածքը, սակայն մեկ օր անց ռազմական ոստիկանության աշխատողների ուղեկցությամբ վերադարձվել է զորամաս: Մոտեցել է նրան և հարցրել, թե ինչ է պատահել, ինչու է լքել զորամասը, սակայն Լևոնը չի պատասխանել, եղել է անտրամադիր: Հաջորդ օրը նոր միայն իմացել է, որ գնացել է հիվանդ տատիկին տեսնելու: Հետագա ժամանակահատվածում Լևոն Թորոսյանի տրամադրությունը կարգավորվել է, իսկ ծառայությունն ընթացել է նորմալ:

2018թ. մայիսի 6-ի՝ առավոտյան ժամը $07^{30}$-ի սահմաններում, թիվ 18 մարտական դիրքում կատարել է գետնատնակի դիտորդի պարտականություններ: Լսել է մեկ կրակոցի ձայն, անմիջապես զեկուցել է պատասխանատուներին, որից մոտ մեկ րոպե անց լսել է ևս 4 մենահատ կրակոցների ձայներ: Քիչ անց տարածված խոսակցություններից իմացել է, որ «Հակոբասար» մարտական դիրքում ինքն իրեն կրակած դիրքով առաջնագծում հայտնաբերվել է համածառայակից Լևոն Թորոսյանի դիակը: Չգիտի, թե ինչի համար է Լևոն Թորոսյանը նման բան կատարել:

**Լևոն Թորոսյանի դասղեկ՝ Դոնարա Նիկողոսյանն** իր ցուցմունքում Լևոն Թորոսյանին բնութագրել է դրական և մասնավորապես հայտնել, որ նա սովորել է մինչև 9-րդ դասարան, որից հետո ուսումը շարունակել է արհեստագործական ուղղությամբ, ընդունվել ու սովորել է գյուղի մշակույթի տանը՝ վարսավիրական մասնագիտությամբ: Լևոն Թորոսյանը եղել է խելացի, հավասարակշռված, ընկերասեր, ընկերոջը պաշտպանող, բնավորությամբ՝ հանգիստ, շրջապատում՝ հարգանքով:

Լևոն Թորոսյանի ծնողները որդու մահվան պատճառների մասին կոնկրետ փաստարկներ չեն հայտնել և իրենց ցուցմունքներում և համացանցի կայք էջերի հրապարակումներում հայտնել են, որ իրենց որդին ինքնասպան չի եղել և որ նրան սպանել են, սակայն սպանության հանգամանքը հաստատող որևէ հիմնավոր փաստարկ չեն հայտնել, այլ նշել են մի շարք ենթադրություններ, որոնք բազմակողմանի քննության առարկա են դարձել՝ ստուգվել, որի արդյունքում, ինչպես նաև գործում առկա մյուս բազմաթիվ փաստական տվյալների հիման վրա, այդ թվում՝ սույն որոշման մեջ նկարագրված, սպանության վարկածը, դեռևս չի հաստատվել:

Լևոն Թորոսյանի մայրը՝ **վկա Արմենուհի Պողոսյանը** ցուցմունք է տվել, որ 2017 թվականի դեկտեմբերի 5-ին որդու հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում տեղեկացրել է, որ նրա տատը՝ Սվետլանա Գրիգորյանը, վիրուսային վարակի պատճառով անկողնային հիվանդ է: Այնուհետև, 2017 թվականի դեկտեմբերի 7-ին՝ ժամը 09-ից 10-ն ընկած ժամանակահատվածում որդին զանգահարել է իրեն և տեղեկացրել, որ ինքնակամ լքել է զորամասի տարածքը, որպեսզի տեսակցի տատիկին: Քիչ անց կատարվածի վերաբերյալ հեռախոսազանգ է ստացել նաև զորամասի սպաներից, որից հետո Լևոն Թորոսյանն ամուսնու կողմից տեղափոխվել է թիվ 21127 զորամաս: Մի քանի օր անց որդուց ստացած հեռախոսազանգի ընթացքում վերջինս պատմել է, որ գումարտակի հրամանատարի պաշտոնակատար Մկրտչյանը, զորամասում զինծառայողների ներկայությամբ շարքի մեջ կանգնած ժամանակ հարցրել է, թե փախստականն ով է: Դա լսելով՝ Լևոն Թորոսյանը հասկացել է, որ խոսքը նրան է վերաբերվում, դուրս է եկել շարքից, որից հետո Մկրտչյանն ուժգին ապտակել է և ավելացրել, որ մնացածը կշարունակի երեկոյան:

Ըստ էության, նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև Լևոն Թորոսյանի հայրը՝ **վկա Արսեն Թորոսյանը,** ով նշել է նաև, որ գումարտակի հրամանատարի պաշտոնակատար Մկրտչյանի կողմից որդուն ապտակելու մասին տեղեկանալուց հետո

զանգահարել և հայտնել է Բերդի ռազմական ոստիկանության աշխատակից Հովիկ Գասպարյանին, ում ճանաչել է որդու կողմից զորամասն ինքնակամ լքելու հարցով: Նրան խնդրել է միջամտել և թույլ չտալ նման վարքագիծ դրսևորել Մկրտչյանին, քանի որ վերջինս որդուն սպառնացել է նույն կերպ շարունակել երեկոյան: Հետագայում այդ հարցով որդին որևէ գանգատ չի ներկայացրել:

Դեպքի նախորդող օրը կեսօրին հեռախոսով զրուցել է որդու հետ, որի ընթացքում վերջինս տեղեկացրել է, որ ամեն ինչ կարգին է, պետք է խրամուղի փորեն: Որդու տրամադրությունը եղել է նորմալ: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 07-ի սահմաններում, Լևոնը կարճ հեռախոսազանգ է կատարել մոր համարին և անջատել, որից հետո հետ են զանգահարել և խոսել նրա հետ: Այդ ընթացքում ևս Լևոնը որևէ գանգատ չի ներկայացրել: Իր խոսելուց հետո հեռախոսը փոխանցել է կնոջը, վերջինս ևս խոսել է, որից հետո Լևոնն ասել է, որ հետո կզանգի և այդքանով խոսակցությունն ավարտվել է:

**Վկա Դավիթ Մկրտչյանը** ցուցմունք է տվել, որ 2017թ. հոկտեմբերից մինչև 2018թ. ապրիլի վերջ եղել է 2-րդ գումարտակի հրամանատարի պաշտոնակատար: Շփումների ընթացքում՝ 2017թ. ուսումնական վաշտում ծառայելու ժամանակ, Լևոն Թորոսյանը պատմել է ընտանիքի դժվար ապրելու մասին, որ ընտանիքն ունի գումարային խնդիրներ, որ ծնողները չեն հասցնում և նա նեղվել է, որ ծառայում էր ու չէր կարողանում օգնել ընտանիքին: Նախկինում իրեն որևէ պրոբլեմատիկ հարցեր հայտնի չեն եղել Լևոն Թորոսյանի հետ կապված, միայն իմացել է, որ ընտանիքը գյուղից է ու մի քիչ դժվար են ապրում:

Լևոն Թորոսյանին որպես կարգապահ, բարեխիղճ զինծառայողի պաշտոնի բերումով ընտրել է և ուղարկել ուսումնական զորամաս, որ նա անցնի համապատասխան դասընթացները և ստանա սերժանտի կոչում, սակայն նա չի կարողացել հանձնել անհրաժեշտ քննությունը և ստանալ կոչումը: Լևոն Թորոսյանի կողմից ինքն իր վրա կրակելու մասին իմանալով՝ զարմացել է ու չգիտի, թե ինչ պատճառով է նա նման քայլի գնացել:

Լևոն Թորոսյանին ապտակելու հանգամանքը հերքել է և նշել, որ մինչև ռազմական ոստիկանության կողմից Լևոն Թորոսյանին զորամաս վերադարձնելը՝ 2017թ. դեկտեմբերի 8-ից մինչև 22-ն ընդգրկված է եղել մարտական հերթապահության մեջ և նրան չի հանդիպել:

Դավիթ Մկրտչյանի կողմից նշված ժամանակահատվածում մարտական հերթապահությունում ընդգրկված լինելու հանգամանքը հաստատվել է նաև զորամասից ստացված համապատասխան տեղեկանքով, համաձայն որի՝ թիվ 21127 զորամասի հրամանատարի 06.12.2017թ. թիվ 0357 հրամանի Դավիթ Մկրտչյանը 2017թ. դեկտեմբերի 8-ից 22-ն ընդգրկված է եղել մարտական հերթապահությունում:

Նախաքննությամբ տվյալներ են ստացվել նաև, որ պարտադիր ժամկետային զինծառայող Լևոն Թորոսյանը 2017թ. սեպտեմբերից-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում, չպարզված օրը, պարտադիր ժամկետային զինծառայող Հարություն Ոսկանյանի հետ ևս ինքնակամ թողել են զորամասի տարածքը և մեկնել Երևան քաղաք, որի մասին զորամասի հրամանատարությանը և ռազմական ոստիկանությանը հայտնի չեն դարձել:

Նախաքննության ընթացքում զննվել է Լևոն Թորոսյանի զինվորական գոտին, որի վրա առկա են՝ «16031», «Lyov T», «Жизнь ворам», «смерть мусарам», «MAGA HOKTEMBERYANCI», «N», «AYE», «1+12», «XXXXXXXXX», «XXXXXXXXXXXX», «ПРИВЕТ ВОРАМ» գրառումները:

Գործով ձեռք բերված տվյալներով Լևոն Թորոսյանը նարկոլոգիական և հոգեբուժական հաստատություններում հաշվառման մեջ չի գտնվել: Բամբակաշատ համայնքի ամբուլատորիայից ստացվել է մանկան զարգացման պատմության և ամբուլատոր քարտի բնօրինակը, իսկ թիվ 21127 զորամասից՝ Լևոն Թորոսյանի բուժման վերաբերյալ փաստաթղթերը:

Նկատի ունենալով, որ Լևոն Թորոսյանի ինքնասպանության հնարավոր պատճառը, նրա հոգեկան վիճակը և քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների պարզումը հնարավոր է միայն դատահոգեբանության և դատահոգեբուժության բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ, 246-րդ, 247-248-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 90753018 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և ՀՀ առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին:
2. Փորձագիտական հիմնարկների ղեկավարներին հանձնարարել՝ փորձաքննությունն իրականացնող փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով, ինչպես նաև նախաքննության տվյալները հրապարակելու համար 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:
3. Փորձագետներին տրամադրել Լևոն Թորոսյանի ամբուլատոր քարտը, փորձագետների պահանջով տրամադրել քրեական գործը կամ քրեական գործից նյութեր, ինչպես նաև փորձաքննության կատարման համար անհրաժեշտ այլ նյութեր:
4. Փորձագետների լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

- Լևոն Թորոսյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե՝ ոչ, եթե առկա է հոգեկան հիվանդություն, ապա ինչպիսի հիվանդություն է, երբ է այն առաջացել և ինչի հետևանքով: Այդ հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու հնարավորությունից և նա կարողացել է ղեկավարել իր գործողությունները, թե՝ ոչ: Եթե տվյալ հոգեկան հիվանդությունն արտաքին դրսևորումներ ունի, ապա տվյալ հիվանդությունը զորակոչային հանձնաժողովը կարող էր ի հայտ բերել, թե՝ ոչ,
- Լևոն Թորոսյանը դեպքի պահին որևէ հոգեկան հիվանդությամբ կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ կամ այլ հիվանդագին վիճակով տառապել է, թե՝ ոչ, որի հետևանքով դեպքի պահին ունակ չի եղել գիտակցել իր գործողությունների բնույթը և նշանակությունը,
- ինչ հոգեվիճակում է գտնվել Լևոն Թորոսյանը դեպքին նախորդող ժամանակահատվածում,
- Լևոն Թորոսյանի և Վալոդյա Հոխիկյանի միջև տեղի ունեցած դեպքերը՝ առանձին-առանձին, ինչպես նաև միասին վերցրած, կարող էին Լևոն Թորոսյանին հասցնել

այնպիսի հոգեվիճակի, որ վերջինս իրեն ամրակցված գնդացրից իրեն հրազենային վնասվածք պատճառեր, պատճառահետևանքային կապ կա, թե՝ ոչ,

- Լևոն Թորոսյանյանի կողմից զինվորական ծառայության ընդգրկվելու և զինվորական կանոնակարգով ապրելու, բնակավայրից հեռու վայրում ծառայելու հանգամանքները, ընտանիքի սոցիալական դրությունը կարող էին վերջինիս հասցնել այնպիսի հոգեվիճակի, որի պատճառով նա կարող էր ինքնասպանություն կատարել՝ պատճառահետևանքային կապ կա, թե՝ ոչ,
- զինվորական ծառայության ընթացքում առկա դժվարությունները, Լևոն Թորոսյանի բնավորության գծերը, վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները դժվարությամբ կատարելը, Վալոդյա Հոխիկյանի կողմից հայհոյանքներ տալու հանգամանքները և գործում առկա մյուս փաստական տվյալներն առանձին-առանձին, ինչպես նաև միասին վերցրած, կարող էին Լևոն Թորոսյանին հասցնել ինքնասպանություն կատարելու հոգեվիճակի՝ պատճառահետևանքային կապ կա, թե՝ ոչ,
- եթե վերը նշված հանգամանքների պատճառով չէ Լևոն Թորոսյանը ստացել հրազենային վնասվածքը, ապա գործի փաստական տվյալները հաշվի առնելով առկա է որևէ տվյալ, որը կարող էր նրան հասցնել ինքնասպանություն գործելուն,
- վերը նշված հանգամանքներից, պատճառներից որևէ մեկը, մի քանիսը, կամ բոլորը միասին վերցրած, կարող էր Լևոն Թորոսյանին հասցնել այնպիսի հոգեվիճակի, որի պատճառով վերջինս պահի տակ չի գիտակցել իր գործողությունները և գնդացրից կրակել է իր վրա՝ հաշվի առնելով գործում առկա բոլոր փաստական տվյալները, այդ թվում՝ նշված փորձաքննությունների եզրակացությունները և դեպքի վայրի զննությամբ արձանագրված տվյալները:

5. Փորձագետներին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբանության և դատահոգեբուժության բնագավառի փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

**ՀԿԳ ավագ քննիչ** **Ա.Գ.Բաղալյան**